2680

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«27» 02 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0027-23

Ձեռնարկողը՝ ***«Վերարտադրողական առողջության, պերինտալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲԸ***
ք.Երևան, Աջափնյակ, Մարգարյան 6/2

Գործունեությունը՝ ***Աջափնյակ վարչական շրջանի Մարգարյան 6/2 հասցեում հասարակական նշանակության շինության և երկհարկանի ավտոկայանատեղիի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0027-23

< 27 > 02 2023թ.

Աջափնյակ վարչական շրջանի Մարգարյան 6/2 հասցեում հասարակական նշանակության շինության և երկհարկանի ավտոկայանատեղիի կառուցման /Բժշկական կենտրոնի մասնաշենքի ընդլայնման և վերակառուցման կցակառույց/ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Վերարտադրողական առողջության, պերինտալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Աջափնյակ վարչական շրջան

Ներածական մաս. Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի (այսուհետ՝ Հայտ)՝ Աջափնյակ վարչական շրջանի Մարգարյան 6/2 հասցեում նախատեսվում է հասարակական նշանակության շինության և երկհարկանի ավտոկայանատեղիի կառուցում /Բժշկական կենտրոնի մասնաշենքի ընդլայնման և վերակառուցման կցակառույց/՝ «Վերարտադրողական առողջության, պերինտալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից: Նախատեսվող գործունեության նպատակն է Հանրապետական Հիվանդանոցի տարածքում կառուցել հասարակական նշանակության վարչական շենք, պահեստային մասնաշենք և ավտոկայանատեղի:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված 2022թ. հունիսի 15-ի N01/18-07/1-Դ-23345-514 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման N20052017-01-0181 վկայականով ամրագրված՝ 1.14765հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7 կետի ա ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «Վերարտադրողական առողջության, պերինտալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲԸ-ի բժշկական կենտրոնի տարածքում: Հասարակական շենքի և ավտոկայանատեղիի համար հատկացված տարածքը սահմանակից է «ՎԱՊՄԳՀԻ» ՓԲԸ-ի ծննդատանը և հանդիսանալու է դրա կցակառույցը: Տարածքը հարակից է Հալաբյան և Մարգարյան փողոցներին: Համաձայն Հայտի՝ հարևանությամբ գտնվող ԱՀՎԼԿ-ի ստորգետնյա պահեստարանը նախատեսվող ավտոկայանետեղիից գտնվում է 26,9մ, իսկ հասարակական մասնաշենքից՝ 25մ հեռավորության վրա:

Դիտարկվող տեղանքը գտնվում է սեյսմիկ II գոտում, որի համար առավելագույն արագացումը գետնի մակերևույթին՝ A=0,4mg: Գրունտների ֆիզիկամեխանիկական հատկանիշներն ըստ կրողունակության ժամանակավոր դիմադրության RO=2.0 կգուժ/սմ² է, ըստ սեյսմիկ հատկությունների III կարգի գրունտներ են, խտությունը մինչև 1,80 գ/սմ³ է, գրունտի սառեցման խորությունը՝ 70սմ: Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է շոգ և չոր ամառը: Օդի առավելագույն բացարձակ ջերմաստիճանը կազմում է +41°C, իսկ բացարձակ նվազագույնը՝ -30°C: Տարվա տեղումների միջին քանակը կազմում է 210մմ: Կառուցապատման ենթական տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ:

Կառուցապատման ենթակա տարածքում բնության և պատմամշակութային հուշարձաններ, ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ չկան: Բնական լանդշաֆտները, բուսածածկույթը, ծառաթփային բուսականությունը բացակայում է:

Նախատեսվող գործունեության տարածքն ունի մեծ թեքություն, իրենից ներկայացնում է մասնակի կառուցապատված տարածք, որտեղ առկա են 7225,7մ², 1805,9մ², 497,63մ², 6793,2մ², մակերեսներով բժշկական կենտրոնի տարբեր մասնաճյուղեր, 6,6մ², 51,1մ², 54,3մ² մակերեսներով օժանդակ շինություններ, 14,7մ² մակերեսով պահակատուն և 64մ² մակերեսով պարիսպ: Տարածքում գոյություն ունի մետաղական ցանկապատ և սրճարան, որոնք պահպանվելու են մինչև շինարարության ավարտը, այնուհետև քանդվելու և տարածքից հեռացվելու են:

Համաձայն Հայտի՝ սույն նախագծով նախատեսվում է կառուցել վերգետնյա երկհարկանի ավտոկայանատեղի, հասարակական նշանակության մասնաշենք և պահեստային մասնաշենք:

Տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են.

- հողատարածքի ընդհանուր մակերես – 1,14765հա,
- կառուցապատման մակերես՝ հասարակական մասնաշենք՝ 807մ², հատակագծային մակերես ±0.000 նիշ՝ 275,709մ²;
- պահեստային և հասարակական մասնաշենքեր՝ 877մ², հատակագծային մակերես ±0.000 նիշ՝ 410,161մ²;
- ավտոկայանատեղի՝ 3555մ², հատակագծային մակերես ±0.000 նիշ՝ 1640,22մ²;
- մեքենաների կայանման քանակ՝ մինչև 150 մեքենա:

Հասարակական մասնաշենքի և ավտոկայանտեղիի կառուցապատման մակերեսն՝ ըստ քաղաքաշինական մակերեսների կազմում է 5239մ², հատակագծային մակերեսը ±0.000 նիշում կազմում է 2326,09մ²:

Ավտոկայանատեղին իրենից ներկայացնում է երկհարկանի բացօթյա շինություն, որը հատակագծում ունի բարդ ուրվագիծ՝ 29.6x59.8մ առանցքային չափերի: Ձախակողմյան և հետևի հատվածում առկա է ելունային 0,8 և 1,9մ մասեր: Նախատեսվել է միաձույլ ե/բետոնե կոնստրուկցիաներով: Դեպի երկրորդ հարկ մեքենաների մոտեցումը ապահովում է մուտքի

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ • РА ЕРЕВАН ГОРОДСКОЙ СТРОИТЕЛЬНЫЙ КОМИТЕТ • RA YEREVAN CITY ARCHITECT SNCO
ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒԱՅՆԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ • ЭКОЛОГИЧЕСКИЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ • ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

և ելքի համար նախատեսված թեքահարթակներով: Երկրորդ հարկի պարագծով նախատեսվում է 1,0մ բարձրությամբ պարապետ:

Հասարակական նշանակության մասնաշենքը բաղկացած է թվով երկու առանձին մասնաշենքերից, որոնցից առաջինը նախատեսված է հողամասի եզրամասում, իսկ երկրորդը՝ պահեստային մասնաշենքի վերգետնյա հատվածում:

- **Առաջինը մասնաշենքը եռահարկ է, միաձույլ ե/բետոնե հիմնակմախքով:** Տանիքը հարթ է: Առաջին հարկում նախատեսվել է հասարակական տարածքներ (դեղատուն, սննդի կետ): Երկրորդ և երրորդ հարկերում նախատեսվել են պացիենտների հարազատների գիշերակացի սենյակներ:
- **Երկրորդ մասնաշենքը** նախատեսվել է պահեստային մասնաշենքի վրա՝ միաձույլ ե/բետոնե հիմնակմախքով: Այն երկհարկանի է. առաջին հարկում նախատեսվել են ավտոկայանատեղիից դուրս եկող մեքենաների համար անցման ճանապարհ (դալան), սանհանգույցներ և աստիճանավանդակ, երկրորդ հարկում՝ աշխատասենյակներ, սանհանգույց: Մուտքային հանգույցներում նախատեսվել են թեքահարթակներ՝ ԲՍԽ խմբերի համար:

Պահեստային մասնաշենքը կիսաստորգետնյա է, որի կոնստրուկցիաները նախատեսվել են միաձույլ ե/բետոնից: Պահեստային շինության աջակողմյան հատվածում նախատեսվում է բետոնե հենապատ՝ 1,1մ բարձրության: Պահեստի կառուցման նպատակային նշանակությունը հիվանդանոցի տարբեր տեսակի տնտեսական ապրանքների պահեստավորումն է (աթոռ, սեղան, մահճակալ և հիվանդանոցի կարիքների համար օգտագործվող այլ ապրանքներ): Շահագործման փուլում նախատեսվող տնտեսական պահեստն օգտագործվելու է որպես բնակչության համար ապաստարան՝ ապահովված համապատասխան մուտքով և ելքով:

Նախատեսվող շինությունների ջեռուցումը և տաք ջրամատակարարումը կատարվելու է «ՎԱՊՄԳՀԻ» ՓԲԸ-ի ջերմամատակարարման համար գոյություն ունեցող կաթսայատնից: Կաթսայատունն աշխատում է բնական գազով՝ տարեկան 4380 ժամ, պահուստային վառելիք չի նախատեսվում: Գազի տարեկան միջին ծախսը կազմում է 400000 մ³/տարի: Գազի այրման ժամանակ առաջացած վնասակար նյութերը արտանետվում են 12մ բարձրության և 0,4մմ տրամագծով ծխատար խողովակի միջոցով՝ մեկ արտանետման աղբյուրից: Կաթսայատան հզորության փոփոխություն չի նախատեսվում: Համաձայն Հայտի՝ այն բավարարարելու է նաև կառուցվող տարածքի ջերմամատակարարումն ապահովելու համար: Գազամատակարարումը կատարվելու է՝ համաձայն «ՎԱՊՄԳՀԻ» ՓԲԸ-ի և «Գազպրոմ 18 Արմենիա» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրի:

Էներգախնայողությունը և էներգաարդյունավետությունը նախատեսվում է կատարել համաձայն գործող նորմերի, ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են շենքի արտաքին պատերի ջերմամեկուսիչ նյութերով պատումը, շենքի երեսապատումը տուֆաքարե շարվածքով (40սմ), հրակայուն, ջրամեկուսիչ, հերմետիկ փակվող պատուհանների դռների օգտագործումը, արտաքին պատերի, տանիքի և հիմքերի ջրամեկուսացումը:

Նոր կառուցվող շինությունները ապահովված են լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և համապատասխան միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Շինարարության ընթացքում շինհրապարակի էլեկտրամատակարարումը կատարվելու է գոյություն ունեցող տրանսֆորմատորային ենթակայանից՝ ժամանակավոր էլեկտրամալուխների անցկացման միջոցով: Շահագործման փուլում

02543183
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

էլեկտրամատակարարումն իրականացվելու է համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի՝ Աջափնյակ 35/կվ-ից թիվ 5 և բջ 32-ի 6կվ ԲՍ-ից՝ տեղակայված 2x300 կՎԱ հզորության ենթակայանից:

Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը միացվելու են կենտրոնի գոյություն ունեցող ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերին՝ համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի:

Շինարարության ընթացքում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից, ինչի սպասարկումը/մաքրումը, շին. աշխատանքների ավարտից հետո նաև ապամոնտաժումը կատարվելու է մասնագիտական կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների իրականացման համար կազմակերպվելու է 1700 մ^2 մակերեսով արտադրական հրապարակ՝ սահմանափակված հիվանդանոցի արտաքին ցանկապատով և ցանցապատ դարպասներ դռնակով: Մինչև շինարարության սկսելը կատարվելու են կոմունիկացիաների տեղադրման, միացման աշխատանքներ, այն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ, լուսարձակներով: Շին. հրապարակում պահեստավորվելու են շինարարության համար անհրաժեշտ նյութերը, կայանվելու է շինտեխնիկան, տեղադրվելու են ժամանակավոր շինությունները և այլն: Նախատեսվող շինարարական և տրանսպորտային միջոցներից օգտագործվելու են ամբարձիչ տելեսկոպիկ, բեռնատար ինքնաթափ մեքենա, բետոնախառնիչ, էլեկտրական և ձեռքի գործիքներ և այլն: Շինարարական նյութերից օգտագործվելու են երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, մետաղական կառուցվածքներ, ամրանային ձողեր, երեսապատման սալիկներ և այլն: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսների վրա: Գործունեության վայր շինտեխնիկան և ավտոմեքենաները մոտենալու են գոյություն ունեցող ճանապարհով՝ Հալաբյան փողոցից:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախառնուրդի պատրաստում չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով մասնագիտացված բետոնային հանգույցներից:

Շինաշխատանքները կատարվելու են մասնագիտացված կապալառու կազմակերպությունների կողմից: Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպություններից:

Նախատեսվող գործունեության իրագործման համար նախատեսվում է 7000մ^3 ծավալի հողային աշխատանքներ: Հողային զանգվածն առաջանալու է շենք-շինությունների հիմքերի փորման և ամրացման, ժամանակավոր կառույցների տեղադրման, ջրամատակարման և ջրահեռացման, գազամատակարարման, էներգամատակարարման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից: 4900մ^3 հողային գրունտը կօգտագործվի տարածքի հարթեցման և հետլիցքի համար: 2100մ^3 խոշոր քարաբեկորներ պարունակող հողային գրունտը շինաղբի հետ կտեղափոխվեն Երևանի քաղաքապետարանի կողմից թույլատրված օրենքով սահմանված վայր: Պարբերաբար կիրականացվի ջրցան՝ փոշեգոյացումը կանխելու նպատակով:

Համաձայն Հայտի՝ գործունեության վայրում բուսահողը բացակայում է:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, կենցաղային աղբն է՝ տարեկան մեկ մարդու հաշվարկով 120կգ/ 3000կգ/տարի, ընդհանուրը 6000 կգ և շինարարական աղբն է՝ 730մ^3 ծավալով: Շինարարական աղբը կուտակվելու է անջրաթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխվելու է Երևանի

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

քաղաքապետարանի կողմից հատկացված վայր: Կենցաղային աղբը կուտակվելու է մետաղական կամ պլաստմասե աղբահավաք տարողությունների մեջ: Տեղադրվելու են նաև կենցաղային աղբի տեսակավորման աղբամաններ: Աղբահեռացումը կատարվելու է Երևան քաղաքի ավագանու 23 դեկտեմբերի 2011թ. 360-Ն որոշմամբ սահմանված կարգով:

Շինարարության և շահագործման փուլերում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր և գազ:

Ջուրն օգտագործվելու է հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու և կենցաղային նպատակների, անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (25 մարդ), ինչը կազմում է 406,8 մ^3/շին.ժամ. կամ 0.564 մ^3/օր: 1700մ^2 ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 637,5 մ^3/շին.ժամ. կամ 2,55 մ^3/օր: Ընդամենը ջրի սպառումը շինարարության ընթացքում կկազմի 1044,3 մ^3/շին.ժամ կամ 3,114 մ^3/օր: Շինարարության ընթացքում առաջացող հոսքաջրերը կուղորդվեն տարածքում տեղադրվող 25մ^3 ծավալով պարզարան: Պարզարանում մեխանիկորեն պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինարարության տևողությունն է 24 ամիս 720 օր, շինարարությանը մասնակցելու են 25 աշխատող (21/4):

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել: Շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու և հեռացվելու են, շինհրապարակը մաքրվելու է թափոններից: Տարածքում առկա է 384մ^2 մակերեսով կանաչապատ գոտի՝ ճեմուղիներով այգի: Գործունեության իրականացման ընթացքում ծառեր չեն հատվելու: Առկա ծառերի, թփերի կամ ծառերի արմատային համակարգերի վնասումից խուսափելու նպատակով նախատեսվել են պաշտպանիչ միջոցառումներ: Շինարարության ավարտից հետո կվերականգնվի վնասված գազոնային շերտը (330 մ^2), կթարմացվի ամբողջ գազոնային տարածքը (384 մ^2), կիրականացվի լրացուցիչ գազոնապատում: Չորացած ծառերի և թփերի հատումը կկատարվի Երևանի համայնքապետարանի հետ համաձայնության առկայության դեպքում: Տարածքի լրացուցիչ կանաչապատում չի նախատեսվում: Տարածքն ապահովված է գիշերային լուսավորությամբ:

Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է տարածքում գոյություն ունեցող ոռոգման համակարգից:

Ներկայացվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունները կանխարգելելու կամ մեղմելու նպատակով կառավարման պլանով նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ, այդ թվում՝

- Օդային ավազան փոշու և այլ օդի աղտոտիչների (CO, NOx և այլն) արտանետումների չափաքանակների պարբերական վերահսկում,
- օդային ավազան կաթսայատան արտանետումների վերահսկում՝ հատկապես անբարենպաստ կլիմայական պայմանների դեպքում,
- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին օրեկան 2-3 անգամ,
- ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը,
- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը, բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը,

- հեղուկ նյութերի պահումը հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար, վտանգավոր արտահոսքերի դեպքում անմիջապես կլանիչ նյութերով մաքրում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը իրականցվելու է փակ ծածկով մեքենաներով,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,
- իրականացվելու են պարբերաբար ստուգումներ՝ բացառելու անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը,
- մեքենաների վրա համապատասխան խլացուցիչների տեղադրում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,
- մեքենաների անիվների և թափքերի լվացումը կատարվելու է մինչ շինհրապարակից վերջիններիս դուրս գալը,
- աշխատողների իրազեկում՝ աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին,
- շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն,
- բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն,
- բողոքների դեպքում Կապալառուի կողմից կիրականացվի օդի աղտոտվածության գործիքային չափումներ՝ ելեկետային տվյալների համեմատությամբ,
- շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
- շրջակա տարածքի՝ վնասված գազոնապատ հատվածի վերականգնում և բարեկարգում, խնամքի ապահովում:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը կազմում է տարեկան մոտ 200,0 հազար դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Համաձայն Հայտի՝ նախատեսվող գործունեությունն իրականացվելու և շահագործվելու է ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները շինարարության և շահագործման ընթացքում լինելու են կառավարելի: Հայտով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում կբացառվեն կամ կմեղմացվեն շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները:

Համաձայն Հայտի՝ բժշկական կենտրոնի ընդլայնումը կնպաստի բուժսպասարկման բարելավմանը, հիվանդների այցելուների համար նպաստավոր պայմանների ստեղծմանը, բնակչության զբաղվածության աճին:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Աջափնյակ վարչական շրջանը, շրջակա միջավայրի նախարարությունը: Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել Հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով աղմուկը և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը՝ խստագույնս հետևել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների աշխատանքների կազմակերպմանը՝ հաշվի առնելով նախատեսվող գործունեության տարածքի առանձնահատկությունը:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Ապահովել Հայտով նախատեսված՝ գործունեության շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացման, շինարարական հրապարակների պարսպապատման, ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերի և շինությունների համապատասխան բարձրության անթափանց թաղանթով ծածկման միջոցառումները:
- Ապահովել ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի XVI բաժնի 311-րդ կետով սահմանված նորմերի պահանջները:
- Իրականացվող աշխատանքների ընթացքում պահպանել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն, իսկ շահագործման ժամանակ՝ 2009 թվականի ապրիլի 16-ի թիվ 06-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Վերարտադրողական առողջության, պերինտալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Մարգարյան 6/2 հասցեում հասարակական նշանակության շինության և երկհարկանի ավտոկայանատեղիի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության Հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ
առաջին կարգի մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան